**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՓՈՓՈԽՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 11.** **<u>«Մարտական խաչ» շքանշանը</u>**

1. «Մարտական խաչ» շքանշանը շնորհվում է հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում ցուցաբերած բացառիկ արիության, անձնուրացության ու հմտության համար:

2. «Մարտական խաչ» շքանշանն ունի երկու աստիճան՝

1) «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշան.

2) «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան:

3. «Մարտական խաչ» շքանշանի բարձրագույն աստիճանն 1-ին աստիճանն է:

4. «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները՝ հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ խիզախության և անձնական արիության համար, այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և դաշնակից կամ գործընկեր պետությունների զինված ուժերի և այլ զորքերի զորամասերը՝ պաշտպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար.

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և դաշնակից կամ գործընկեր պետությունների զինված ուժերի և այլ զորքերի զորամասերը՝ մարտական գործողությունների ընթացքում ձեռք բերած նշանակալի հաջողությունների համար:

5. «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները, այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և դաշնակից կամ գործընկեր պետությունների զինված ուժերի և այլ զորքերի զորամասերը՝ մարտական առաջադրանքների հմուտ կատարման համար.

2) Հայաստանի Հանրապետության ~~արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունների աշխատակիցները~~ **ներքին գործերի նախարարության ոստիկանության, փրկարար, ազգային անվտանգության, արդարադատության նախարարության քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները**, այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և դաշնակից կամ գործընկեր պետությունների զինված ուժերի և այլ զորքերի զորամասերը՝ ցուցաբերած արիության համար:

**Հոդված 17. Արիության մեդալը**

1. Արիության մեդալը շնորհվում է հայրենիքի պաշտպանության, հասարակական կարգի պահպանության, ազգային անվտանգության գործում, քրեակատարողական և ~~դատական ակտերի հարկադիր կատարման~~ **հարկադիր կատարման ապահովման**, ինչպես նաև փրկարարական աշխատանքներում ցուցաբերած անձնական խիզախության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական կամ քաղաքացիական պարտքը կատարելու համար:

2. Արիության մեդալով պարգևատրվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները, Հայաստանի Հանրապետության ~~արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության, մաքսային, հարկային բնագավառների պետական կառավարման լիազոր մարմինների, արդարադատության նախարարության քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունների աշխատակիցները~~ **ներքին գործերի նախարարության ոստիկանության, փրկարար, ազգային անվտանգության, արդարադատության նախարարության քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ու պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային ծառայողները**, ինչպես նաև այլ անձինք:

**Հոդված 19. Մարտական ծառայության մեդալը**

1. Մարտական ծառայության մեդալը շնորհվում է մարտական առաջադրանքների կատարմանը նպաստող հմուտ, նախաձեռնող, համարձակ գործողությունների, զորքերի մարտական պատրաստվածության ապահովման, պետության սահմանները պաշտպանելիս ցուցաբերած ծառայությունների համար:

2. Մարտական ծառայության մեդալով պարգևատրվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողները,

~~ոստիկանության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների բնագավառների պետական կառավարման լիազոր մարմինների~~ **ազգային անվտանգության, ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության և ոստիկանության** ծառայողները, ինչպես նաև այլ անձինք:

**Հոդված 24. «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեդալը**

1. «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեդալը շնորհվում է իրավակարգի ամրապնդման, հասարակական կարգի պահպանման կամ հանցավորության դեմ պայքարի գործում ցուցաբերած սխրագործության կամ անձնվիրության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կամ քաղաքացիական պարտքը կատարելիս խիզախություն ցուցաբերելու կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար:

2. «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեդալով պարգևատրվում են՝

1) Հայաստանի Հանրապետության ~~կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության~~ ոստիկանության ծառայողները, ~~ոստիկանության զորքերի զինծառայողները~~ և ոստիկանության քաղաքացիական ծառայողները.

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ~~Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության~~, ~~Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության, արդարադատության նախարարության քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարման~~ **ազգային անվտանգության, ներքին գործերի նախարարության փրկարար, արդարադատության նախարարության քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող** ծառայությունների կամ պետական կառավարման այլ մարմինների ծառայողները.

3) Հայաստանի Հանրապետության այլ քաղաքացիները, Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձինք: